

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2015թ.

N \_\_\_\_\_ Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004  
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N526 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 21-ի «Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Ստեփանակերտի քաղաքապետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N526 որոշման 2-րդ կետի «բ» ենթակետով հաստատված հավելվածի 11-րդ կետում «Զարգացման ծրագրերի բաժին» բառերը փոխարինել «Արտադրական ենթակառուցվածքների բաժին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ**

**<< Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 21-ի N526 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման ընդունման**

**1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 21-ի «Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Ստեփանակերտի քաղաքապետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N526 որոշման 2-րդ կետի «բ» ենթակետով հաստատված հավելվածի 11-րդ կետով սահմանված է Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժինը:

Ներկայումս, բաժինը փաստացի զբաղվում է ներքաղաքային հասարակական տրանսպորտի աշխատանքների, կանգառների և կայանատեղերի կազմակերպմամբ, վերահսկում երթուղիներն ու չվացուցակները, մասնակցում քաղաքի ճանապարհափողոցային ցանցի զարգացմանն առնչվող քաղաքաշինական հարցերի մշակմանը, իրականացնում ուղևորատար տրանսպորտի կանգառանշանների գույքագրման, տեղադրման ու վերանորոգման աշխատանքներ, վերահսկում քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործումը և իրականացնում այլ լիազորություններ, սակայն բաժնի անվանումն ավելի ընդհանրական է:

**2. Առաջարկվող կարգավորման բնույթը**

Սույն որոշման նախագծի ընդունմամբ առաջարկվում է Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի <<զարգացման ծրագրերի բաժինը>> վերանվանել <<արտադրական ենթակառուցվածքների բաժին>>:

**3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը**

Որոշման նախագիծը մշակվել է Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից:

**4. Ակնկալվող արդյունքը**

Բաժնի վերանվանումը թույլ կտա համապատասխանեցնել բաժնի կողմից փաստացի իրականացրած աշխատանքներն անվան հետ: